



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ**

Կիրակի, 23 Յուլիսի երեկոյեան, Կլենտլի Minx ճաշարանին մէջ տեղի ունեցաւ գնահատանքի երեկոյ մը, որ կազմակերուած էր Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային Վարչութեան կողմէ, նուիրուած Նաւասարդեան 31-րդ մարզախաղերու յաղթանակին:

Արժ. Տ. Արտակ Թինյ. Տեմիրճեան, իբրեւ Առաջնորդ Սրբազան հօր ներկայացուցիչը, ներկայ եղաւ ձեռնարկին, կատարեց սեղաններու օրհնութիւնը եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազան հօր գնահատանքն ու յաջողութեան մաղթանքները Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքին:

Տեր Հայրը նաեւ ըսաւ որ Հ.Մ.Ը.Մ.-ը միշտ պատիւ ու պարծանք բերած է մեր ժողովուրդին իր դիմագրուած յաջողութիւններով, ըլլան անոնք սկաուտական եւ մարզական աշխատանքներով: Նաեւ գնահատեց Նաւասարդեանի պատուոյ նախագահը՝ Տեր եւ Տիկին Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեաններն ու 2006 տարուան տիպար Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայրը՝ Սամուէլ Մկրտիչեան, ինչպէս նաեւ 31-րդ Նաւասարդեանի ծիրին մէջ տարուած աշխատանքները, մասնակցողները, կամաւոր աշխատողները եւ բոլորին բարի երթ մաղթեց:

## **APPRECIATION NIGHT FOR THE H.M.E.M. 31<sup>ST</sup> NAVASARTIAN GAMES**

On the evening of Sunday, July 23rd, an appreciation night was organized by the H.M.E.M. Regional Executive in honor of the success of the 31<sup>st</sup> H.M.E.M. Navasartian games. The event took place at the Minx Restaurant in Glendale.

As the Prelate's representative, Rev. Ardag Demijian blessed the tables and conveyed the Prelate's remarks of praise and wishes to the entire H.M.E.M. family. He stressed that H.M.E.M. has always brought pride and joy to the community with its successes. Rev. Demirjian congratulated honorary president Mr. and Mrs. Hovsep and Elizabeth Boyajian, exemplary member Samuel Megerdichian, as well as all those involved with the planning and carrying out of the games along with the participants.

## **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿԱՆ ԺՈՂՈՎ**

Երեքշաբթի, 25 Յուլիսի երեկոյեան, Յովիվուտի Ս. Կարապետ մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ուսումնական ու դաստիարակչական հարցերու քննարկման խորհրդաժողով մը:

Առաջնորդ Սրբազանին ու Ազգային Վարչութեան նախաձեռնութեամբ այս ժողովին մասնակցեցան Ազգային Վարչութեան, Թեմիս Ազգային Վարժարաններու հնամակալ Մարմինի անդամներ, Ազգային Վարժարաններու եւ մանկամտօրներու տնօրէններ ու վարիչներ, հայկական միութեանց վարչութիւններու ներկայացուցիչներ եւ կրթական հարցերու մասնագետ հրաւիրեալներ:

Ժողովը քննարկեց հայեցի դաստիարակութեան հարցեր, մասնաւորաբար նկատի ունենալով այն կարիքները, որոնք կը բխին ոչ-հայկական վարժարաններ յաճախող հայ աշակերտներու հայերէն լեզուի ու հայ մշակոյթի ուսուցման կարիքներէն:

## **EDUCATIONAL CONFERENCE**

On the evening of Tuesday, July 25, a conference to discuss educational issues, initiated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate and Executive Council, took place at the “Karapetian” Hall of St. Garabed Church in Hollywood.

Executive Council members and representatives of Prelacy Schools Board of Regents, principals and directors, representatives of community organizations, and authorities in the educational field participated in the conference.

The conference discussed issues concerning Armenian education and culture to youth, particularly the needs of Armenian students attending public schools.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀՈՎԱՆԱԴՐԵՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՐՆԿՑ. ՄԻՈՒԹԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ԶԵՌՆԱՐԿԸ**

Ուրբաթ, 28 Յուլիսի երեկոյեան ժամը 7:30-ին, Կլէստէյլի հանրային գրադարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Վասպուրականի Հայրենակցական Միութեան հիմնադրութեան 75-ամեակի տօնակատարութիւնը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան հօր եւ կազմակերպութեամբ միութեան Կեդրոնական Վարչութեան:

Առաջնորդ Սրբազան հօր կ'ընկերանար Մոնթեպէլլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Փեղիվանտեան:

Օրուան բանախօսն էր միութեան անդամ Մայքըլ Սօսիկեան: Իրագործուեցաւ ցեղարուեստական յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը բերին երգերով՝ Սուրեն Հազարեան եւ Արա Սահակեան, ասմունքով՝ Յակոբ Մկրտիչեան:

## CELEBRATION OF THE 75<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE VASBOURAGAN COMPATRIOTIC UNION

On Friday, July 28, at 7:30 p.m., the Vasbouragan Compatriotic Union celebrated its 75<sup>th</sup> anniversary. The event, organized by the Central Executive, was held under the auspices of the Prelate at the Glendale Public Library.

Rev. Nareg Pehlivanian of Holy Cross Cathedral in Montebello, accompanied the Prelate.

The evening featured keynote speaker Michael Sosikian, and an artistic program with the participation of Suren Hazarian, Ara Sahagian, and Hagop Megerdichian.

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ՛ՕՐՅՆԷ ՀԱՅԿ. ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՔԱՅԼԱՐՇԱՒԸ

Շաբաթ, 29 Յուլիսին, Արեւմտեան մեր Թեմի շրջանին մէջ տեղի պիտի ունենայ հայրենասուեր ու ազգասուեր ծառայութեան սրտառուչ ձեռնարկ մը՝ Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամին կազմակերպած հանգանակային քայլարշաւը:

«Կեանքի քայլարշաւը» խորագրեալ այս ձեռնարկը տեղի պիտի ունենայ Փասատիւնայի «Rose Bowl Park»ին մէջ ու անոր հասոյթը պիտի տրամադրուի յիշեալ հիմնադրամի ծրագիրներուն իրականացման:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ քայլարշաւին ու աւարտին, անգամ մը եւս փոխանցելու իր քաջալերանքն ու օրհնութիւնը:

Յիշեցնենք, որ Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամը այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 5րդ տարեդարձը:

Անոր աշխատանքի գլխաւոր մարզերէն մէկն է կամաւորներ արձանագրել, որպէսզի կարիքի պարագային՝ անոնց դիմուի, արեան ու ոսկրածուծի տուչութեամբ հայ կեանք մը փրկելու համար:

Առաջնորդ Սրբազանն ու մեր եկեղեցիները ընդառաջած են այս հիմնադրամի կոչերուն ու մասնակցած՝ անոր նախընթաց նախաձեռնութիւններուն:

Հիմնադրամը յառաջիկայ Ուրբաթ, 4 Օգոստոսին կազմակերպած է նաեւ հանդիսութիւն մը, պատուելու համար իր առաքելութեան զօրակից ու նուիրաբերող հայորդիներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր ներկայութեամբ պիտի քաջալերէ բարեսիրական եւ մարդասիրական այս ձեռնարկը:

Հիմնադրամը իբրեւ «Տարուան մարդը» պիտի պատուէ ազգային բարերար Վարանդ Մելքոնեանը, իբրեւ «Տարուան խմբակը»՝ Կիրակոս եւ Կիրակոս իրաւաբանական գրասենեակէն Մարք Գասապեանը, Վիգէն Փափագեանն ու Լարա Երեցեանը, իսկ իբրեւ «Տարուան կամաւորները»՝ Վրէժ Յովսէփեանն ու Ֆիմի Մխիթարեանը:

## **PRELATE OFFERS HIS BLESSINGS AT THE ARMENIAN BONE MARROW REGISTRY WALK-OF-LIFE**

On Saturday, July 29, the “Walk-of-Life” organized by the Armenian Bone Marrow Registry will take place at the “Rose Bowl Park” in Pasadena. The Prelate will attend the march to offer his encouragement and blessings.

On Friday, August 4, there will be a fundraising concert to honor supporters. The Prelate will be in attendance to offer his support.

The organization will honor Varant Melkonian as “Man of the Year”, Mark Kassabian, Vicken Papazian, and Lara Yeretsian, of Geragos and Geragos Law Firm as “Group of the Year”, and Vrej Hovsepian and Fimi Mekhitarianian as “Volunteers of the Year”.

### **ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԱՅՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ**

Արեւմտեան մեր Թեմին համար, Կիրակի, 30 Յուլիսը պիտի ըլլայ յիշատակելի օր, որովհետեւ մեր եկեղեցւոյ ծառայող դպրաց դասերը պիտի օժտուին խումբ մը ձեռնադրեալ սարկաւագներով:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի պատարագէ, սարկաւագական ձեռնադրութիւն պիտի կատարէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Էնսիւնյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Այս առթիւ Առաջնորդ Սրբազանը սարկաւագութեան աստիճան պիտի շնորհէ մեր եկեղեցիներու դպրաց դասերու մէջ ծառայող 6 անդամներու, որոնք արժանի նկատուած են այս ձեռնադրութեան:

Սարկաւագական աստիճան պիտի շնորհուի՝ Բիւզանդ Տապաղեանի, Պետրոս Ասատուրեանի, Վահագն Թօփճեանի, Գեորգ Փալանճեանի, Րաֆֆի Կարապետեանի եւ Աւօ Աբգարեանի:

Ս. Խորանին պիտի սպասարկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազանին հովանաւորութեամբ եւ ցուցմունքներով, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքը մշակած էր սարկաւագներու պատրաստութեան դասընթացք մը, որ տեսց աւելի քան երկու ամիս:

Ուրարակիր դպիրներ հրաւիրուեցան մասնակցելու այս դասընթացքներուն, զորս վարեց Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Դասընթացքի աւարտին, տեղի ունեցան համապատասխան քննութիւններ եւ արժանաւորները ահաւասիկ կը ստանան մեր եկեղեցւոյ ու Զրիստոսի քաղցր լուծը կրելու պատիւը, հետեւելու քրիստոնեական եկեղեցւոյ առաջին սարկաւագին՝ Ս. Ստեփանոսի ու անոր ուղիէն քալող բոլոր ծառայողներուն օրինակին:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագի արարողութեան, սարկաւագաց ձեռնադրութեան եւ լսելու Առաջնորդ Սրբազան հօր հոգեշունչ պատգամը:

## **ORDINATION OF DEACONS AT HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

On Sunday, July 30, the Prelate will conduct Holy Mass, ordain deacons, and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

Six stole bearers will be ordained as deacons. They are: Puzant Dabbaghian, Bedros Assadourian, Vahakn Topjian, Kevork Palanjian, Raffi Garabedian, and Avo Apkarian.

Rev. Razmig Khatchadourian will assist the Prelate at the altar.

The acolytes completed a two-month preparation course under the supervision of the Prelate and taught by Prelacy Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՏԻԹՐՈՅԻԹԻ ՄԷՋ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋ-ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԸ**

Չորեքշաբթի, 2 Օգոստոսին, Թեմիս Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի մեկնի Տիթրոյիթ, մասնակցելու համար Յիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու Առաջնորդներու հանդիպումին, որուն օրակարգի գլխաւոր հարցն է Միջ-եկեղեցական գործակցութիւնը՝ Էքիմենիք շարժումի ծիրին մէջ:

Կը նախատեսուի, որ խորհրդակցութեան նիւթ ըլլայ նաեւ Լիբանանի աղետեալներուն օժանդակութիւնները համակարգելու միջոցները:

Ժողովին կը մասնակցին, Առաջնորդ Սրբազանին կողքին, Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեմեզեան եւ Յիւսիսային Ամերիկայի մեր Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու Էքիմենիք աշխատանքներու վարիչ Գերշ. Տ. Անուշաւան Եպսկ. Դանիելեան:

Առաջնորդ Սրբազանը Լոս Անճելըս պիտի վերադառնայ Ուրբաթ, 4 Օգոստոսին, ու նոյն երեկոյ ներկայ պիտի ըլլայ Յայկական Ոսկրածուծի Յիմնադրամի հանդիսութեան:

## **PRELATE TO PARTICIPATE IN A JOINT MEETING OF THE PRELACIES OF NORTH AMERICA TO DISCUSS ECUMENICAL ACTIVITIES**

On Wednesday, August 2<sup>nd</sup>, the Prelate will depart for Detroit to participate in a meeting of the Eastern and Western Prelacies of North America. The main topic of the meeting will be ecumenical relations and activities.

It is anticipated that the coordination of aid to Lebanon will also be discussed.

Also participating in the meeting will be H.E. Archbishop Oshaghan Choloyan, Prelate of the Eastern Prelacy, H.G. Bishop Nareg Alemezian, Ecumenical Officer of the Catholicosate of Cilicia, and H.G. Bishop Anoushavan Tanielian, Director of the Ecumenical Department of North American Prelacies.

The Prelate will return to Los Angeles on Friday, August 4<sup>th</sup>.